

ԴԵՊՈՒ ՍԱՆԱՀԻՆ

Ա .

Համարեա՛ կէս գիշերն էր, երբ ես իմ յոյն ծանօթիս հետ գէպ Ալեքսանդրապոլ տանող կառախմբով թողի Տփլիսը ։ Այդ օրը Ջափիկ էր եււեա վաղուց մտադրուել էի Ջաակուայ միւս օրը Սանահնում անցկացնել ։

Ընկերս Սանահնի մօտ դառնուած գիւղերիցն էր եւ պէտք է խոստովանուել ։ որ պարզ եւ մաքուր հայերէն էր խօսում ։ Սրբ մենք մտանք վաղոնը ։ որոշեցինք տեղաւորուել ամենավերին Ննջարան-տախտակների վրայ ։ Ներքեւի ննջարանների ու նստարանների վրայ մի քանի մարդ իրար մօտ նստած խօսում էին, եւ որովհետեւ նրանց նստած տեղը մութն էր, ուստի եւ չըզխեմ որտեղից մոմ բերին եւ վառեցին վապոնի փոքր սեպանի վրայ ։ Շուտով փոռերն փարթամ ընթրիք, օրին յատուկ ուտեստեղէնով եւ կողքից էլ զլուխ էր հանել բաւական մեծ տկճորը, որտեղից լի ու լի հոսում էր գինին ու հետզհետէ բարձր իրկրպագունների կատարները առաջացնում ։ Այս խմբին միացաւ եւ մի հայ գիւղացի եւ սկսեց երգել ու բամբուսն վրայ նուագել ։ Նորից շատ զեղեցիկ եւ հարուստ ըսվանդակութեամբ մի երգ էր, եւ օրումն ջարիքներից մէկի պատմութիւնը ։ Ինչպէս վերջը իմացայ, երբ չէր գիւղի տիրացուի տղան էր, բայց թէ ո՞ր գիւղի այդ չկարողացայ ըստուգել ։

Կէս գիշերից բաւական անցել էր, բայց սրանք չարունակում էին, իսկ ես իմ ընկերոջս հետ պառկեցինք սնելու, բայց շուտով ընկերս արթնացրեց ինձ ասելով որ արդէն հասնում ենք Ալավէլդիի Սա խոկապէս կայարան չէ եւ կառախումբը երկու րոպէ միայն կանգ է առնում ։ Մենք դուրս եկանք, իջանք եւ մտանք երկաթուղային տախտակէ սրահը, որ կայարանի տեղ է ծառայում ։ Ընկերս ուրիշ ճանապարհով էր գնալու եւ ես մինակ էի մնում ։ Երկինքը ամպած էր եւ անձրեւ էր մաղում, դեռ եւս մութն էր ժամը 4-ն էր եւ ես մնացել էի շուարած ։ Շուտով կառախումբը սլացաւ եւ մենք մնացինք միայնակ ։ Միւս կողմը մի քանի տուն կայ շինած, որտեղ ապրում են երկաթուղային բանտորները, իսկ աջ թեւի վրայ կովկասեան Արդէնաբերական Հանքային ընկերութիւն շինութիւններն են, որոնք կայարանային արտ-

էից աւելի չեռու եւն քսն բանուորներ չամատները-բնակ քրտ'ները :
Մենք որոշեցինք զնալ բանուորներ մատ : Մի բանուոր հերս հրաւիրեց
մեզ : Մենք մտածք : Ես զարեացած մնայի , երբ տեսայ , որ սենեակում
եղած բանուորները բոլորն էլ վրացի են , է՛հ , մախլա՛ս , քա էլ երկա-
թուղային վարչութեան դործն է , որ տեղացուն — հային զրկում . օտա-
րին է տեղ տալիս :

Ես սկսեցի վրացերէն հարցովործ անել մեզ հիւրընկալող
բանուորին վանքը գնալու վերաբերեալ :

— Ես ձեզ կը տանեմ , վայն չըկայ , այս կողմը ամենաապահով կողմն
է , միայն մի քիչ ճանապարհը վատ է :

— Ի՞նչպէս :

— Ժայռերով պէտք է բարձրանանք . թէպէտ վանքի Եպիսկոպոսը
չի՞նք նոր ճանապարհ , բայց նա չորս վերստ է , իսկ ժայռերով ձեռաց
կը բարձրանանք :

Ես կանգնեց մի կողմ եւ առաջարկեց գնալ : Յոյն ընկերս էլ
խորհուրդ տուեց գնալ . որովհետեւ ինքն արդէն գնում էր :

Մենք զուրս եկանք : Արդէն լուսանում էր : Գեղեցիկ աստուծո չր,
այլ եւս անձրեւ չկար եւ ես դիմեցի զեպի Սանահին :

Մենք անցանք Սանահնու հռչակաւոր կամրջով եւ սկսեցինք
բարձրանալ :

Այս անտառի ժայռերը պատմական սրբութեանց շարքին են պատ-
կանում : Հայի թշնամին , եղ : մենք պատմական գեղեցիկ շրջանում
էինք , հաշար տեսակ պարտութիւններ է կրել ժայռերի մօտ եւ ջարդեր
կերել : Այսպիսի ժայռերով բարձրանալու համար ի հարկէ երբ վերե-
ւից հալածողը պատրաստ է , պէտք է հաշարաւոր զոհեր տալ , իսկ վե-
րեւից բաւական է 50-ից 100 մարդ , որ ջախջախէ 25000 զինուորի :

Իմ ուղեկից վրացին արագ արագ բարձրանում էր , բայց ես բո-
լորովին թուլացել էի եւ մի քարի-ժայռի մօտ նստեցի որպէս զի
չունչս ետ բերեմ : Ես նայում էի . տեսաբանը սքանչելի էր , եղանակը
գարնանային , օգը մաքուր , բնութիւնը դժմալու էր եւ լըս-
ւում էին թռչնոց երգերը : Հինգ լոպէ նայեցի , բայց դեռ եւս մի փոքր
բան միայն կարողացայ տեսնել : Այս բնութեամբ հրճուելու համար ա-
միսներ են հարկաւոր : Ես առաջ գնացի , ուղեկիցս իմ փոքրիկ զամ-
բիւղը ձեռքին վազելով վեր էր էլնում . իրեն ասելով՝ օրը չորս
հինգ անգամ վեր ու վար է անում :

Սանահնի ժայռերը միտքս բերին Օշակահի ժայռերը , որը Նոյն-
պէս պաշտպանուելու կոյտոնն է եղած , երբ Վահանը ջարդում էր Մաղ-
քիթներին , նպաստողները անառիկ ժայռերն էին : Բայց Սանահնի մօտ
եղած յաղթութիւններից ո՛ր մէկը յիշես :

Վերջապէս հասանք Սանահնու բարձրալեռնակը :

—Այժմ դուք ինքներդ կարող էք զնալ, —ասաց ուղեկիրցս եւ ձեռքով ցոյց տալով աւելացրեց, — ահա գիւղը :

Եւ ճիշտ որ ինձնից մօտ երկու վերստ հեռու երեւում էր գիւղը եւ վանքը : Եւ շնորհակալութիւն յայտնեցի ուղեկցիս, 20 կողմի բախշեցի, որի համար նա մի քանի անգամ շնորհակալութիւն յայտնեց, եւ դիմեցի դէպի գիւղը :

Գիւղը շինուած է աւելի բարձր տեղ, դիրքը դ՛հեցիկ ու զուարճալի, օղը պատուական եւ իսկական ամառանոց, դիւղը մօնելիս մի քանի տնից յետոյ արդէն վանքն է շինուած : Գիւղը փոքր է եւ հազիւ 30-40 տուն բնակիչ ունի : Գիւղի մէջ երեք չորս լաւ տներ կան, որոնք Արղութեան — երկայնաբաղուկ իշխաններին են պատկանում : Գիւղի արեւելեան կողմից Աստուածածնայ կոչուած ձորն է տարածուում, իսկ արեւմտեան կողմից Սեաւորդեաց (ինչպէս վկայում է նաեւ Ասրգիւս արքեպիսկոպոս, Հասան — Ջալալեանը) : Բնակիչները հայ են, թաւմուկ հայ, իսկ տեղի հարուստներն էլ Արղութեաններն են, որոնցից մէկը իր ընտանիքով մշտապէս դիւղումն է ապրում :

Եւ մօտեցայ գիւղին եւ չըմպտտուեցայ շնորով : Եւ պաշտպանողական դիրք բռնեցի, բայց զրութիւնս չառ վատ էր. եւ եթէ մի դեղձկուհի վրայ չըհասներ, եւ կը դղղուէի : Դեղձկուհին տեսնելով իմ գլխարկի աւելի քաշուեցաւ եւ ազատելուց յետոյ՝ երեսը շուռ տուեց ու դնաց, երեսի նա ինձ ոռու կարծեց եւ լեզուն չըդիտնալու պատճառով հեռացաւ :

— Գոյրի՛կ, քոյրի՛կ, — կանչեցի ես :

Նա երեսը դարձրեց դէպի ինձ :

— Յոյց տուր ինձ վանքի ճանապարհը :

— Ահա, այսպէս բարձրացիր ու դարձաւր թափիր :

Եւ առաջ գնացի :

Բ.

Փոքր ինչ պատմութիւնից : Ասողիկ Ստեփանոս Տարոնացին ասում է թէ Աշոտ Գ Ողորմածի օրով ղչինեցան կրօնաւորանոցք, ճղնաւորականաց տեղիք Սեւորդեաց աշխարհին, հաւասարակեացք, միաբանականք, ըստ յառաջասացեալ կանոնին սահմանադրութեան սրբոյն Բարսիլ, որոց երկոցունց տեղեացն անուանք Հաղբատ եւ Սանահին

(1) Ծանապարհորդ, 'ի Մեծն Հայաստան, հատ Ա. էջ 9 :

հոնգկայ միմեանց, միակրօնք 'ի տան Կատուծոյ՝ արսնց շոց (1) Բայց աւելի հաւատարիմ պէտք է կարծել Հասան Զալախանի ասածը (2) և չինեալ 'ի կրօնաւորաց՝ փախուցելոց 'ի Ռոմանոսէ կայսերէ Յուսոց, վասն ստիպելոյ զնոսա ընդունիլ զչորրորդ ժողովն որ 'ի Վաղկի. գոն Սոյն եկեղեցի. ըստ պատմելոյ մատենագրաց եւ ըստ հաւատարիմ աւանդութեանց է հնագոյն ըստ զբաղում եկեղեցիք Հայաստանեաց Թանլիս աւաքեալքն Քրիստոսի աստ եղին զխաչն 'ի նպատակ պաշտաման ժողովրդոց, յետ որոյ սուրբն Գրիգոր Լուսաորհէ շինեաց Իսկուսոյն խորան 'ի վերայ աւաքեալգիր խաչին, եւ այս յիշեալ կրօնաւորքն եկեալ անշր շինեցին զհոյակապ եւ զլիւսարդեան եկեղեցի 'ի ներքուստ եւ արտաքուստ չքնաղ շինուածովք մասնաւոր գիւթոյնիէն համալսփ եւ գեղեցիկ և

Սանահնի Լուսաւորչաչէն յինելը հաստատում է եւ ժողովրդական աւանդութիւնը. բայց ժողովրդաբուն սկզբում Արաւ թագաւորի օրով, մօտաւորապէս 935 թ. Հոռոմոց աշխարհից փախած կրօնաւորները եկեղեցի շինեցին յանուն Ս. Աստուածածնի՝ Վ. Թանահն Լուսէ քաղաքին» (3)։ Սանահնի վանքը, ըստ Ինճիճեանի, գտնուում էր Ուտիք նահանգում, որի գաւառը յայտնի չէ, բայց զատկաւ է սրբվհտեւ հին Ուտին բաւական հեռու է այդ տեղից քան կարծել է հանգ. Ինճիճեանը։ Սանահնի գտնուում է նախկին Գուգարի Զորոփոր եւ Տաշիր գաւառների սահմանում (4)։ այժմեան Լուսա գոտիում (5)։

Հայոց Աշոտ Գ. Ողորմած թագաւորի կին Քոստովանոյ թագուհին 957 թ. նորոգեց Սանահնի վանքը պայծառացրեց, շինութիւններ աւելացրեց. իսկ որդին՝ Սմբատ Բագրատունի թագաւորը՝ հրովարտակով հաստատեց վանքի կալուածները եւ անիմեց այն մարդկանց, որոնք կը զրկէն այդ վանքը կալուածներէր—անա այդ հրովարտակի պատճէնը։ Վերջապէս ամենազաւրին Աստուծոյ Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն եւ Սմբատ Բագրատունի թագաւոր Հայոց, թողն տիեզերակալ եւ մեծ թագաւորին Սմբատայ որդւոյ թագաւորին Աշոտայ Ողորմածն հոչեցելոյ եկի 'ի տեսութիւն սուրբ ուխտիս Մանանիս, զոր շինեալ էր թա-

1) Ասողիկ, Պրուրո 1885. էջ 181. գլ. Բ.։

2) Ճանապարհորդ. էջ 91։

3) Հ. Ղ. Վ. Ինճիճեան, Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, էջ 345 համա. վարդան եւ Կիրակոս Գանձակեցի։

4) Աշխարհագրութիւն Հայաստան, Ա. Տէր Յակովբեանցի—էջ 152 միայն Զորափոր է ասում։

5) Եթէ Եւրոպայի հայ Ուսանողական Միութեան տպած քարտէսին (1904 թ.) նայինք, Կիւսիսի պէս (Ինչպէս եւ Վենետիկի քարտէսով) Ս. զէքսանդրոպոլի մօտն է գտնուում Սանահնը (6)։

գաւորն Աշոտ եւ Սոսորովանոյն թագուհին՝ հայրն եւ մայրն ի Բ. եւ տեւի, զի աստուածաշէն եւ թագաւորաշէն էր, վասն որոյ սիրելիք եւ սիրո նշան արարեալ հաստատեցի զօտ ամթոռ եզրիսկո զոսուկեան, եւ սահմանեցի զվիճակ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ հայր վանաց զնսայ, ետու առնել եպիսկոպոս մեծի հայրապետին Հայոց Սահլայ, եւ անդառնալի հրամանաւ մերով ետու վիճակ եւ երկիրս զայս Ամնածնիս, զամնահայն երկիրն Տաշրաց զվերին եւ զներքին մինչեւ ի լեռն քաղաք յայս կոյս եւ յայնկոյս մինչեւ ի սահմանս Գուգարաց աշխարհին, եւ մինչեւ ի սահմանս Տփիստոյ եւ Վրաց եւ ի սահմանս Նիգ դաւառին, եւ մինչեւ ի սահմանս Կայինթոյ, եւ ի սահմանս Մաղկոցաց մինչ ի սահմանս տանն Շիրակայ, եւ Սմբատ թագաւոր իմ թագաւորական ի խանութեամբն եւ կաթուղիկոսաց հրամանաւքն վաթոռս զայս եւ զվիճակս հաստատեցի ի Սանահնի սուրբ Աստուածածնիս, որ էր գերեզմանատուն նախնեաց մերոց վասն յիշատակի հաւր իմոյ եւ մաւր թագաւորին Աշոտոյ, եւ թագուհւոյ Սոսորովանոյն, ինձ կենաց եւ յետ մահու ի զարդ սուրբ Աստուածածնիս, Որպէս հայրն իմ եւ մայրն իմ նորոգեալ էին եւ զարգարեալ զարգարանօք եւ յովով գեղօրէիք եւ հայրենեօք սարով եւ ձորով, եւ արդ հի՛ է ոք իմ հրամանաց եւ սուրբալ սիգէլիս հակառակի եւ կտրէ եւ խափանել ջանայ ի թագաւորաց կամ իշխանաց եւ ի կաթուղիկոսաց զիմ հաստատեալ վիճակին՝ ԳՃԺԸ հայրապետաց նշովեալ եղիցի Գրեցու ի թուականին Հայոց Նի՛Ը. ին » : (1)

Այս հրովարտակը տաւած է 981 թ. եւ այդ օրից Սանահնը միշտ եղել է հարուստ. Պարսիկ, Տաճիկ իշխաններն, խաներն ու հայ մելիքները եւ առ հասարակ ամեն տեսակ իշխողները սրբութեամբ կատարել են այդ օրէնքը, բայց 1903 թ. յունիսի 11ին հրատարակած օրէնքով Սանահնի կալուածներն էլ յարքուհիս են զրուած եւ աժմ Սանահնը՝ որ հնումն ահագին՝ բազմաճառ միաբանութիւններ է պահել, բնորոշեալ չէ մի մարդու պահելու իր ողորմելի եկամուտով :

Սանահնի յարկը բարձր են պահել եւ Վրաստանի թագաւորները եւ մեզ հասել է վրաց Ռոստոմ թագաւորի հրովարտակը, որ տուած է 1660 թուին եւ որով մի շարք կալուածներ են տրուում, բայց զորանից սեպականութեան իրաւունքն էլ տպահովուած է համարուում :

Սանահնի վանուց նորոգութիւնները մի առ մի թուելը աւելորդ ենք համարում, միայն այսքան ասենք, որ վանքն առանձնապէս ծաղկացրել ու նորոգել են Գրիգոր Տուսէօրդին, Զաքարէ սպասալարը, Իւանէ աթաբէկը, Գուրգ իշխանը եւ այլք, Մեծ խնամք ունին Սանահնի վրայ

1) Ճանապարհ. Հ. Զաւալեան, էջ 43-44 :

Արղուժեանները , որոնք 1310 թ իշխանական տիրոջ ոռոգման Ռաւ-
սաց Պօղոս կայսրից շնորհիւ Յովսէփ Դ. չօժուած կաթողիկոսի և Ըսո
աւանդաւթեան՝ սրանց նսխանայրն է Արղուժ իշխանը(1)։ Վերջին նորո-
գութեան մասին մենք յետոյ կը խօսինք , իսկ զրանից առաջ նորոգ-
ուել է 1634 թ. Հայոց Յակոբ եւ Փիլիպպոս կաթողիկոսներին օւղով , ձե-
ռամբ Սարգիս արքեպիսկոպոսի Յէրէքեանց ։

Սանահինը իշխանների տոհմական գերեզմանատունն է եւ այդ տեղ
կնթաղուած մի շարք հոգեւորականներ որոնք մշտմանսկի կռիւներ ու-
ղէներ են ունեցել Հայաստանեայց առաքելական եկեղեցու դա-
ւանութեան համար , Սանահինի վանականները առանձնապէս յայտնի
են Արեւելեան եւ Արեւմտեան կոչուած վէճերի ժամանակ ։

Գ .

Դառնանք ճանապարհորդական նկատառութիւններին ։

Ես մօտեցայ դարազին , որի մէջ եղած փոքրիկ դուռը բաց էր ներս
մտայ վանքի բակը , առաջ գնացի , իսկը դատարկ էր եւ մոռելային լը-
ռութիւն էր տիրում ։ Նայեցի եկեղեցուն եւ յիշեցի յօսակի Յա-
րութիւնեանի նկարագրած «Սանահին»ը ։ Որքա՛ն փոխութիւն . . . սա
հօ՛ւարդէն մի շէն վանք է . . . ամենայն ինչ փոխուել է գէպի լաւը . . . չորս
կողմս նոր է ։

Ես դիտում էի չորս կողմս , երբ վանքի բակը մտաւ գիւղի քահանան՝
ծերունի Տէր Յովնանէտը ։ Դառնան տեսնելով ինձ՝ մօտեցաւ եւ սովոր-
ական ողջոյնից յետոյ հարցրեց ո՛վ լինելս եւ գալու . . . նկատակը , յե-
տոյ մօտեցաւ զանգակատունը եւ սկսեց «հասարակաց» զանգահարու-
թիւնը , որից յետոյ ես եւ նա մօտեցաւ գաւիթը ։ Աստուած իմ , ահազին
գաւթի յատակը ընդհարմին գերեզմանաքարերով՝ տապանաքարերով է
ծածկուած , որոնց վրայ արձանադրութիւններ կան ։ Դաւիթով անց-
նելիս՝ ես տեսայ եւ իշխան Զաքար Մօխէյի Արղուժեանի գերեզմանը ։
Ո՛վ չի ճանաչում այդ անվեհեր իշխանին , Դաղեպտանում սարսափ
առաւօդ հերոսին , դեռ այսօր էլ կանգուն է նրա արձանը Քէմիր-խան-
Շուբայում , դեռ այսօր էլ ծերունի լէզգիները յիշում են նրա գէմքը ,
որի մի փոքրիկ դիմագծից անդամ վախենում էր աւազակ լէզգին ։ Դաւ-
թում մի շարք նշանաւոր մարդոց գերեզմաններ կան հոգեւորական-
ների , իշխանների . . . Մենք մօտեցաւ եկեղեցի , եկեղեցին շինուած է
հայկական ճարտարապետութեամբ առանց սիւների , ճաշակը նուրբ լու-

(1) Յ. Տէր-Աբրահամեան օթովսէփ Դ. կաթ. կենսագր. , եր . 3-4 ։

սաւոր պատուհաններով, Հասարակաց դասի յատակը աւելի ցածր է քան հոգեւորականներէ դասերի յատակը եւ շինուած է քարից :

Եկեղեցու ներսը շատ մաքուր էր եւ այդ եկեղեցին պէտք է որ օրինակ լինի Տփլիսի եկեղեցիներին, որոնք աչքի են ընկնում իրանց թողով ու կեղտոտ աշտանակներով ու սուրբ պատկերներով :

Շուտով եկեղեցի եկաւ եւ Զաքարիա վարդապետը, որ այդ օրը պատարագիչ էր եւ սկսուեցաւ ժամերգութիւնը, որին մասնակցեցի եւ ես որպէս դպիր: «Ճէր գի ըազում» սաղմոսը վերջացնելու վրայ էի երբ եկեղեցի եկան երկու գիւղացի ու անմիջապէս ժամաշապիկը հագնելով սկսեցին դպրութիւն անել: Եւ մի կողմ յաշուեցայ Դպիրների թիւը աւելացաւ, հաւաքուեցան 12 տիրացու, որոնք դասերի բաժանուած երգում էին շարականներն ու սաղմոսները Էջմիածնի եղանակներով: Կարգն ու կանոնը կատարեալ էր եւ երգեցողութիւնը դուրեկան ու հաճելի: Եւ զարմացած մնացի պատարագի երգեցողութեան վրայ, 8-9 գիւղացի դպիրների զասումը կանգնած՝ առանց սխալուելու, ետ ու առաջ մնալու, երգեցին պատարագի արարողութիւնը եւ հերթով երգեցին մեղեդին, սրբասացութիւնը եւ այլ միայնակ երգելի արարողութիւնները :

— Ո՞վ է սրանց ուսուցիչը :

Վանքի վանահայր սրբազան Գարեգին եպիսկոպոս Սաթուհեանը, որ իր գալու օրից ամեն երեկոյ իր մօտ էր հաւաքում ձայնաւոր գիւղացիներին ու սովորեցնում եւ հաւա օգուտը, անկիրթ գիւղացիները պարզ եւ յստակ կերպով կարդում են Ս. Գիրքը, երգում շարականներն ու տաղերը: Սա մեծ յառաջդիմութիւն է Սանահնի պէս պատմական վանքի համար: Եկեղեցին լցուել էր հասարակութեամբ, որոնք առանց մի ձայն հանելու լսում էին ժամերգութիւնը, չը կար խօսակցութիւն, չը կար մանդալը, ինչպէս ինք մէջ սովորութիւն է, ամենքն էլ կարծես մխոռանդ էին իրենց տեղերում: Հաւաքակապակիր զգիւղացին հասկանում է եկեղեցու յարգը, բայց կրթուած-դաստիարակուած ո՛ր է եւ այս բոլորը միշտ որոնեցէք հայոց մէջ ուրիշ ազգերը գիտեն թէ ի՞նչ է եկեղեցի, բայց մենք, որ այսօր եկեղեցական ազգ ենք՝ Հայ ենք եկեղեցիով, միացած ենք շնորհիւ եկեղեցու, առանձին ազգ ենք շնորհիւ, եկեղեցու, եւ գոյութիւն ունինք շնորհիւ դարձեալ եկեղեցու, չենք յարկում այդ եկեղեցին եւ եկած տեղը մինչեւ անգամ հայոյում, Օսմալի է, երբ մարդս չըթուելով փոխանակ զգաւատանալու, յիմարանում է, Լուսաւոր ու ազատամիտ երկիրներում անգամ եկեղեցին շատ բարձր է, քան մեր մէջ, եւ ես այս ասում եմ աչքի առաջ ունենալով որ նրանք եկեղեցական ազգ չեն եւ ունին ինքնուրոյն պետութիւն, Ճիշտ է նոր պետութիւնը սահմանափակել է եկեղեցու պաշտօնէից իրաւունքները, բայց եկեղեցին մնացել է նոյն եւ նոյնքան սիրելի, որքան առաջ էր, բայց

յեր մէջ լիբերալիզմը ոչնչացնում է եկեղեցուն .
դա արդէն յիմարութիւն է եւ ոչ թէ կեանքի պահանջ :

Վերջացաւ պատարագը եւ մենք դուրս եկանք մեզ հետ էլ Զաքարիա վարդապետը ու Տէր Յովաննէսը զէսոսաւորուած, սկսուեցաւ գերեզմանօրհնէքը նախ գաւթում եւ յետոյ էլ դուրսը :

Եւ նայեցի դէպի սրբաշանի բնակարանը : Սրբաշան Գարեգին Եպիսկոպոսը պատշգամբումն էր եւ խոսում էր իշխան Արղութեանի հետ, որը եկեղեցումն էր եւ մեզ հետ դուրս էր եկել :

Եւ շտապեցի ներխայնաւու սրբաշանին : Սրբաշանը սիրալիր կերպով ընդունեց : Մեր խօսակցութեան նիւթն էր վանքը : Եւ արդէն թեւէ էի վանքի մասին մանրամասնօրէն ուրիշից :

1901 թ . ապրիլ ամսին Ս. անահին է ժամանում Նորին Վեհափառութիւն Հայոց Հայրիկը մի քանի նշանաւոր աղագիրներին հետ Սաթունեան սրբազանն էլ լինում է Նորին Վեհափառութեան շքախմբի մէջ : Երեկոյեան անձրեւային եղանակ լինելով հազիւ կարողանում են մի ողորմելի սենյակ զանել, որը անձրեւի կաթիլուց ալաւ է եղել : Հարց է բարձրանում հայոց վանքերի աննախանձելի դրութեան մասին եւ Վեհափառ Հայրիկը ցաւ ի սրտի յայտնում է, որ Հայ կուսակրօնները չեն հպատակում իր հրամաններին եւ չեն ուզում այդպիսի վանքերում ապրել, որպէսզի վանքերը բարեկարգուէին, եթէ հին բարեկարգութիւնը անկարելի է, զոնէ այնքան ցաւալի դրութեան մէջ չը լինէին, որ ազգի կաթողիկոսի համար մի սկսեակ անգամ չը լինէր :

Գարեգին սրբաշանը լսելով Վեհափառի գանգատները, դառնում է Նորին Վեհափառութեան .

— Զե՛րդ Վեհափառութիւն օ՛վ կառող է Զերդ Ս Օնոթեան կամքին հակառակ դնալ, հրամայեցէք եւ օ՛վ կարող է չըկատարիլ հրամանը :

— Որ այդպէս է . — ասում է Հայոց Հայրիկը . — հէնց քեզ եմ վանահայր կարգում, կը դա՞ս :

— Հրամանից ծառան եմ, պատասխանում է սրբաշանը :

Եւ այդ օրից գերապատիւ Գարեգին սրբաշանը կարգուեցաւ վանահայր Ս. անահինի, իսկ ճարտարապետ Նիկողայոս Գրգորեանին էլ հրամայուեցաւ սրբազանի ցանկութեան համաձայն վանքի ճարտարապետական մասին հոգալու :

Սրբաշանին վանքը յանձնուեցաւ ամենաողորմելի դրութեան մէջ, Եկեղեցու տանիքը խոտով էր ծածկուել եւ տեղ տեղ եղած բացուածքներից խոնաւութիւն էր ներս մտել, եկեղեցու մէջ անձրեւային եղանակին անկարելի էր ժամերգութիւն ասել : Բաղը մօտակայ լեռներից տեղացող հեղեղներից բոլորովին լցուել էր քար ու հողով եւ եկեղեցու պատերի մօտ 2-3 արշին հող էր հաւաքուել, ծածկուել էին իշխանների ու թաղաւորների գերեզմանները, իսկ խարխուլ շինուէ,

թիւններէ մէջ անկարելի էր աղբիւր սննդանիւթից շատերը հողով էին յոգւած և շարտարապետ Ն. Գրիգորեանը սրբազան Գարեգին եպիսկոպոսի հետ կազմեցին նորոգութեան նախագիծը, որով 12 հազար ռուբլի էր պահանջուած, մինչդեռ վաճառքը մի կողմէ անգամ չունէր և Սանահնի նախկին վանահայրները ինչպէս կենդանի կերպով վաճառք վերակայուած է, ինչ որ եղել քանդել էին, բայց շինելով ոչինչ չէին շինել և 1901 թ. յունիսից Սրբազանը ձեռնամուխ եղաւ կարդի բերելու Սանահնը, ուրիշ գալու օրից և Ստալին գործն եղաւ նիւթակաւը հոգալու, ուստի եւ դիմեց հայ հարուստներին, Ո՞վ կը մերժէր սրբազան Սաթուհեանին, այն հոգեւորականին որի գործունէութեան բարի նետքերը դեռ այս օր էլ փայլում են կովկասի զանազան քաղաքներում Ո՞ր տեղ միայն եղել է նախնի սիրտուած է եղել եւ գործունեաց, եւ ո՞ւր դիմել էր ամենքն էլ քչով շատով օժանդակութիւն էին տուել, որով հաւաքուած էր 10500 ռուբլի Սյս գումարից 5000 ռուբլին յատկացրից դէպի Սլավոբրդի խճուղի շինելուն, որի համար ծրագիր էին կազմիւ ճարտարապետներ Գալիկը եւ Ն. Գրիգորեանը և Սյս խճուղին արդէն բացուած է եւ այն էլ ամենաթաշտոտ տեղերով, երկարութիւնը 4 վերստ է եւ մարդս զարմանում է թէ ինչպէս սրբազանը կարողացել է 5000 ռուբլիով շինել խճուղին, որի համար, ըստ ճարտարապետների, 8 հազարն էլ բաւական չէ ։

Ես չսեւ հմ. որ թելաւեցի հայ վտանգական Ոսկանեանը լսելով սրբազանի գործնէութեան մասին, մի հանրակացք է նուիրել վանքին ։

Գումարի միւս կէտով սրբազանը շինել է 14 սենեակ պատժգամներով, եկեղեցու հիւսիսային եւ հարաւարեւելեան կողմից ։ Նորոգուած են Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալեանի օրով շինուած 11 սենեակները, իսկ եկեղեցին սրբազանի խնդրանաց համաձայն, նորագուեցաւ իշխան Արղութեանների հաշուով, սանիթը ծածկուեցաւ քարով եւ նորոգութիւնը կատարուեցաւ շատ շոգունութեամբ, որպէս զի հին ձեւը չը կորչէ ։ Վերցուեցաւ եկեղեցու շորս կողմ եղած հողը, որով ծածկուած էին նոյն իսկ դաւիթի պատուհանները ։

Նորոգուած է նաեւ Գրիգոր Մազիստրոսի ճեմարանի շինութիւնը, որտեղ Մազիստրոսի աշակերտները ուսում ստացան եւ յետագայում եղան ջատագով հայրենի եկեղեցու ։

Նորոգուեցաւ Սանահնի նշանաւոր մատենադարանը, որը նախկին վանահայրերից մարտնի էր վերածուած ։ Սաթուհեան սրբազանը մտադիր է այդտեղ մատենադարան բանալ, որի համար վե՛ւ հաթոգիկոսը 107 կոորգիրք է նուիրել եւ սրբազանը ընդունում է նուիրատուութիւն (գրքերով) այդ իսկ նպատակով ։ Յանկալի է որ հայ հեղինակները չը զլանային, Սրբազան Սաթուհեանը այժմ վերաստանի եւ իմեղթի թեմի առաջնորդ է եւ միեւնոյն ժամանակ վանահայր Սանահնի ուստի եւ

գրքերը կարելի է ղրկել Տփլիս արքազանի անունով :

Նորոգուած է նաեւ ջրի աղբիւրը, որը բոլորովին քանդուած էր եւ ջուր բերելու համար ահագին տարածութիւն պիտի գնային : Իսկ այժմ դիւղի եւ վանքի համար կոչ ջուր: Վանքը շրջապատուած է ժամանակաւոր պարսպով եւ ինչպէս լսեցի, արքազանը մտադիր է շրջապատել ամուր պարսպով :

Վանքի բակում, հիւսիսային կողմը, վանահօր բնակարանի կողքին եղած դասարակ տեղը, որ եղնջի ու եօնջայի համար էր թողուած, նոյնպէս մաքրուած է եւ փոքրիկ պարտէզ է տնկուած : Մաքրուած է եւ ծաղիկներով շրջապատուած Գուրգէն արքայորդու գերեզմանը :

Մէկ խօսքով ամենայն ինչ իր տեղումն է : Մաքրուած են հողից ու խոտերից՝ վանքի մօտ եղած Արղութեանց դամբարանը, Տուտէորգու մատուռը, խաչքարերը եւայլն եւ այլն :

Վազցր տպաւորութեան տակ թողի Սանահինը : Գիւղի մէջ ինձ շրջապատեցին գիւղացիները, որոնք միաբերան օրհնում էին Սրբազան հօրը եւ ասում, որ նրա գալու օրից իրենց տնտեսական դրութիւնը բոլորովին լաւացել է. եւ որ գլխաւորն է, վանքի նորոգութեան ժամանակ նրանք են օգտուել ու բանել :

Եւ կը ծանօթացնեմ շուտով «Բանասէր» ընթերցողներին, Գարեգին արքազանի կենսագրութեան հետ :

Առ այժմ Սանահնի վանքն է շինուած, նորոգուած, կարգի բերուած, սակայն որքա՛ն վանքեր կան, որոնք կիսաւեր են մնացել եւ Սաթուհեանիներ կարօտ :

Իշխ. ՀԱՅԿ ՀԱՅԿԱԶՈՒՆԻ

ՌՈՒՍԱՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

Յակոբ Յակոբեան

1866 թ. մայիսի 17-ին ծնուել է Գանձակամ եւ ուսումը ստացել է աշտեղի գիմնազիօնում : Հայրը եղել է բուն Ղարաբաղցի, որ տեղափոխուելով Գիւլիստան կոչուած մշակից՝ ամուսնացել է Գանձակում : Դեռ գիմնազիօնում ուսանող ժամանակ Յակոբեանը սկսել է ուսանաւորներ գրել 1881 թուականից սկսած եւ մասնակցել է աշակերտական «Յոյս» ամսաթերթին : 1893ին Թիֆլիս վերադառնաւ եւ սկսե-